ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2018 թվականի N 82

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 8-րդ և 22.1 կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Զալիխան Դմիտրիի Սիմոնյանի, Սոս Շեյլոկի Սիմոնյանի, Ալլա Շեյլոքի Սիմոնյանի, Կարինե Շեյլոկի Սիմոնյանի և Մարինե Շեյլոկի Սիմոնյանի սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2-րդ փողոց 2-րդ նրբանցք N 4 հասցեում գտնվող 0003-0004 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.11 հեկտար հողամասի՝ նշված չափից 0.016757 հա ավելի փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ, քանի որ.
   1) համայնքի գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար.
   2) հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և չեն փոխվել հողամասի պարագծային չափերը.
   3) հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում
2. Զալիխան Դմիտրիի Սիմոնյանին, Ալլա Շեյլոքի Սիմոնյանին, Սոս Շեյլոկի Սիմոնյանին, Կարինե Շեյլոկի Սիմոնյանին և Մարինե Շեյլոկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2-րդ փողոց 2-րդ նրբանցք N 4 հասցեում գտնվող 0.126757 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված 103.58 քմ արտաքին մակերեսով

շինությունները՝ 50.88 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 52.7 քմ արտաքին մակերեսով ծածկարանը ճանաչել օրինական, քանի որ.

1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու համար նախատեսված վճարները չեն գանձվում:

4. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 7
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2018 թվականի N 83

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2018 թվականի օգոստոսի 24-ի N 43 որոշման՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.36 հա վարելահողի ընդլայնման համար ուղղակի վաճառքով «ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին օտարվող համայնքային սեփականության 0202-0063 ծածկագրի 0.10741 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր, քանի որ օտարվող հողամասն արտաքին պարագծով առնվազն 60 տոկոսով պարփակված է ընդլայնվող հողամասով:
2. «ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 237380 /երկու հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր ութսուն/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 12

գ. Նոր Արտամետ